

նից, որի մասնագիտական քննադատութիւնը մեր նպատակներից դուրս է: Մենք միայն յանձնարարում ենք մեր ուսուցողների ուղադրութեան այդ գիրքը, որի մէջ ի մի են ամփոփուած շատ նիւթեր արեւելահայ լեզուի, մասին, և որոշ սխառմի են վերածուած: Այս գրքոյկը կարող է լրացնել անցեալ համարում մատնանիշ արած պ. Մ. Արեղեանի քերականութիւնը:

N.

Նախագիծ կանոնադրութեան եւ ծրագիր Ապրիլ եկեղեցական օտարական դպրոցների, Թիֆլիս, 1906 թ. Գ. 30 կ.

Անցեալ 1905 թ. յուլիսի 20-ին Կաթողիկոսի կոնգակով նշանակուեց մի յանձնաժողով «վասն մշակելոյ կանոնադրութիւն և ծրագիր մի»: Այդ յանձնաժողովը մշակեց կանոնադրութեան հիմնական կէտերը և օգոստոս ամսում հրաւիրեց ուսուցիչներից և ձեռնհաս անձերից մի ժողով, կարծիք յայտնելու յանձնաժողովի մշակած սկզբունքների մասին: Ժողովը ընտրեց մասնաժողով, որի մշակած կանոնները և ծրագրները պէտք է նախ քննուէին ուսուցչական—հոգաբարձական պատգամաւորների համագումարում ապա հաստատուէին Կաթողիկոսից: Սակայն մեր ազգի տէր ու տնօրէն բիւրոկրատները ուղեցին այդ համեստ կուլտուրական գործում էլ իրանց քիթը կոխել և տրասօրէն ամեն բան տակնուվրայ անել. բոյկոտ յայտարարուեց համագումարին, կենդրոնական ժողով պահանջուեց զանազան քալլագեօղութիւններ անելու և «յեղափոխական» իմաստակութիւնների մասին պոռոտախօսելու նպատակով: Ինչպէս ամեն մի ձեռնարկ, որին ձեռք է մէկնում «սարսափելի տղերանց» խմբակը, այնպէս է կենտրոնական ժողովը վիժեց: Եւ ա՛հ աւերի և ապականութեան ասպետները այն արեցին որ դպրոցական քօսան էլ մեզանում մնաց ամփոփով:

Արդ, զո՞նեա իբրև մի ժամանակաւոր ուղեցոյց մեր ողբալի «կուլտուրական» սոււբուրի մէջ, թող ծառայէ այս նախագիծը, որի պակասաւոր կողմերը մատնանիշ կ'անի մի տարուայ փորձը:

Փ.